



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿՈՆԳՐԵՍ»
«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»**



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան

14 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական միավորումների միջազգային միությունը, «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը կարևորելով

- Հայաստան-Սփյուռք գործակցությունը,
- հայ ազգային ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը նպատակաուղղված ծրագրերի ընդլայնումը,
- հայկական համայնքների ինքնակազմակերպմանն աջակցելը,
- Սփյուռքում ուժացումը կանխելու հրամայականը,
- հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված նախապատրաստական աշխատանքները,
- հայապահպանությանն ուղղված ռազմավարական նշանակության ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ գործում տարբեր կազմակերպությունների, խմբերի, առանձին անհատների շահագրգռվածությունն ու ունեցած ներդրումը՝ պայմանավորվեցին մշակել և իրականացնել համատեղ ծրագրեր և աշխատանքներ հետևյալ ոլորտներում.

I. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

1. Աջակցել Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ և այլ երկրների հայկական համաունժնեռոհ (աւսուիւեւո՝ հաւ համաւնժնեռոհ) առաւիհն ևոթաւաւն ևաոոուսնեոոուհ.

հայկական մեկօրյա (կիրակնօրյա) դպրոցներում, ազգային փոքրամասնությունների մշակութային և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններում, բուհերում հայկական կրթական ծրագրերի իրականացմանը, դրանց զարգացման և տարածման գործընթացներին:

2. Նպաստել հայկական նոր կրթօջախների ու կրթական ծրագրերի ստեղծմանը՝ հատկապես երիտասարդության շրջանում «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնների շրջանակներում պահպանելու և տարածելու հայոց լեզուն:

3. Մշակել հայկական կրթօջախների հայագիտական առարկաների դասագրքերի և ուսումնա-մեթոդական գրականության վերաբերյալ առկա կարիքների ուսումնասիրման (հայտերի հավաքագրման) ու պահանջարկի բավարարման (ՀՀ-ից այդ գրականության առաքման) համատեղ կենտրոնացված կառուցակարգեր:

4. «Սփյուռք» ամառային դպրոցի, վերապատրաստման և որակավորման բարձրացման այլ ծրագրերի միջոցով էլ ավելի ակտիվացնել հայ համայնքներում աշխատող հայագիտական առարկաների գծով ուսուցիչների, մշակույթի աշխատողների վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

5. Աշխատանքներ իրականացնել հայ համայնքներից Հայաստանի Հանրապետության բուհեր նպատակային ուսուցմամբ ընդունվելու համար դիմորդների քանակի (այդ թվում՝ պետպատվերի և նպատակային կրթության միջոցով) ավելացման, ուսանողների փոխանակման ուղղությամբ:

6. Մշակել և իրականացնել Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ այլ երկրների բուհերի հայ ուսանողների ուսումնաարտադրական, նախադիպլոմային պրակտիկան Հայաստանում կազմակերպելու ծրագիր,

7. Սփյուռքի մտավոր ներուժի բացահայտման, նրա գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ ԳԱԱ-ի, ստեղծագործական, մասնագիտական միությունների, համահայկական ընկերակցությունների հետ համատեղ մշակել ծրագրեր և կազմակերպել մասնագիտական համաժողովներ, կլոր սեղաններ, հավաք-հանդիպումներ:

